Լրամշակված նախագիծ

երկրորդ ընթերցում

Կ-353-16.08.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազդարարման համակարգի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-97-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «, պետական հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների» բառերը փոխարինել «և կազմակերպությունների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետում «պետական հիմնարկներում և կազմակերպություններում, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններում» բառերը փոխարինել «ինչպես նաև կազմակերպություններում» բառերով:

2. 2-րդ կետում «պաշտոնատար անձի կամ մարմնի հետ» բառերը փոխարինել «պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ» բառերով, իսկ «վարչաիրավական» բառից հետո լրացնել «կամ այլ» բառերը:

3. 4-րդ կետում «պետական հիմնարկ և կազմակերպություն» բառերը փոխարինել «պետական և համայնքային կազմակերպություն» բառերով:

4. 5-րդ կետից հանել «, որի աշխատողների կամ հաստիքների քանակը գերազանցում է հիսունը» բառերը:

5. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7) **կոռուպցիոն բնույթի դեպքեր**՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցանքներ.»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և 13-րդ հոդվածի 1-ին մասում «էթիկայի» բառը փոխարինել «վարքագծի» բառով:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3. ազդարարում հանրությանը:»:

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մաս՝

«4. Հանրությանն ազդարարում են համարվում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումները, որոնք քրեական դատավարության օրենսգրքի և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն համապատասխան վարույթ նախաձեռնելու առիթ կամ հիմք կարող են հանդիսանալ:»:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը «լիազորած անձին» բառերից հետո լրացնել «(բացառությամբ մասնավոր ոլորտի կազմակերպությունների, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին)» բառերով:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածում

1. 2-րդ մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Իրավասու մարմնի վերադաս մարմնի բացակայության դեպքում հաղորդումը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով կամ համապատասխան մարմնի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով (առկայության դեպքում):»:

2. լրացնել նոր 8.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«8.1. Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգային կանոններն ու ժամկետները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ոլորտային օրենսդրությամբ:»:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում «հանցագործության» բառը փոխարինել «կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման»:

Հոդված 8. Օրենքի 9-րդ հոդվածում

1. լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը վերահասցեագրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:»:

2. լրացնել նոր 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ապահովում է իրեն վերահասցեագրված իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:»:

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1-ին հոդվածով.

«**Հոդված 9.1. Ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրությունը**

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները վարում են ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրություն՝ իրենց և իրենց ենթակա մարմիններում ստացված հաղորդումների վերաբերյալ, որի վարման կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Վիճակագրության մեջ պետք է զետեղված լինեն ազդարարման վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ հետևյալ տողերի՝ ներքին, արտաքին, հանրությանը և միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված:»:

Հոդված 10. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին գլխով.

«

ԳԼՈՒԽ 4.1
ԱԶԴԱՐԱՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Հոդված 9.2. Ազդարարում հանրությանը

1. Եթե ազդարարման մյուս տեսակներով հաղորդումը օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել, ապա ազդարարը կարող է հաղորդումը հայտնի դարձնել հանրությանը զանգվածային լրատվության միջոցներով:

2. Հաղորդում ստացած զանգվածային լրատվության միջոցները ապահովում են ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ կամ առկա չէ անձի գրավոր համաձայնությունը:

3. Ազդարարին տրվող պաշտպանությունը տարածվում է զանգվածային լրատվության միջոցների վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է նրանց նկատմամբ:

4. Իրավասու մարմինն ապահովում է իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

5. Իրավասու մարմինը՝

1) ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.

2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հարուցում է վարույթ.

3) ապահովում է վարույթի գաղտնիությունը.

4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով.

5) իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունն ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազություն.

6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.

7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.

9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

7. Ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է, եթե վերջինիս անձը հայտնի է:

8. Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգային կանոններն ու ժամկետները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ոլորտային օրենսդրությամբ:

9. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը սույն օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն սույն օրենքի 13-րդ հոդվածի իմաստով, ապա իրավասու մարմինը դադարեցնում է պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է համապատասխան անձին:

10. Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության դատախազություն:»:

Հոդված 11. Օրենքի 10-րդ հոդվածում՝

1. լրացնել նոր 2.1.-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Ազդարարն ունի Մարդու իրավունքների պաշտպանից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք:»:

2. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել իրավասու մարմնին, որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և կայացնել համապատասխան որոշում: Նշված որոշումն ուղարկվում է Ոստիկանությանը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանությունն ապահովելու համար:

Ազդարարին հատուկ պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման իրավասու պետական մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով սահմանված կարգով, այնքանով, որքանով իր էությամբ (mutatis mutandis) կիրառելի է:»:

3. լրացնել նոր 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Ազդարարն իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս օգտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից:

3.2. Ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով համապատասխան մարմինն իր իրավասության շրջանակներում՝

1) ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը.

2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.

3) ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ.

4) իրականացնում է ազդարարի աշխատանքային իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված միջոցներով և կարգով.

5) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ, այդ թվում՝ ազդարարին տեղափոխում է այլ աշխատասենյակ, ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը և այլն:

3.3. Ազդարարը չի կարող ենթարկվել որևիցե պատասխանատվության ազդարարման համար, բացառությամբ եթե նրա արարքը պարունակում է հանցակազմ:»:

Հոդված 12. Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունը ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:»:

Հոդված 13. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող իրավական ակտերը Կառավարությունն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

3. Սույն օրենքի 9-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ, «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը.

«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագծի (այսուհետ նաև՝ Նախագծեր) ընդունումը պայմանավորված է ազդարարման համակարգի կատարելագործումը, զարգացումը և ստանձնած միջազգային պարտավորությունների կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

2. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիր.

Նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշման միջոցառումների ծրագրի 26-րդ կետի կարգավորմամբ, որով սահմանվել է ազդարարման համակարգը պարբերաբար կատարելագործելու և զարգացման նպատակով շարունակական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը:
Միաժամանակ, Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշման հավելված 1-ի 16-րդ՝ «Կոռուպցիայի դեմ պայքարը» նպատակի 16.5-րդ միջոցառման շրջանակներում նախատեսվել է «Ազդարարման համակարգի մասին» օրենքում իրականացնել համապատասխան փոփոխություններ:

3.Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ներկայումս ազդարարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ազդարարման համակարգի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) և դրանից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով: Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքը կարգավորում է ազդարարման, ազդարարման կարգի, ազդարարի իրավունքների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների՝ ազդարարման հետ կապված պարտականությունների, ինչպես նաև ազդարարի և նրա հետ փոխկապակցված անձանց պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
Նշվածի հաշվառմամբ պետք է նշել, որ ներկայումս ազդարարման ինստիտուտի ոչ բոլոր հիմնական նպատակներն են արտացոլվում Օրենքի կարգավորումներում, և ըստ այդմ անհրաժեշտություն է առաջացել վերանայել գործող կարգավորումները:
Գործող օրենսդրության խնդիրներն ընդգծվել են նաև միջազգային պարտավորությունների կիրարկման շրջանակներում: Մասնավորապես, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացվել է գնահատման հինգերորդ պիլոտային փուլը, որի շրջանակներում վեր են հանվել հետևյալ հիմնական խնդիրները.

- ազդարարման համակարգի օրենսդրությունը չի տարածվում մասնավոր հատվածի աշխատողների վրա,
- ազդարարման դեպքում օրենսդրությամբ ազդարարի դեմ ձեռնարկված գործողությունների՝ ազդարարման հետ կապված չլինելու վերաբերյալ ապացուցման բեռի հետ կապված սահմանված չեն հատուկ կարգավորումներ,
- Օրենքը չի տրամադրում ազդարարողին քրեական ընթացակարգերից դուրս անձնական անվտանգության պաշտպանության միջոցներ,
- Օրենքը չի նախատեսում այնպիսի պաշտպանության միջոցներ, ինչպիսիք են խորհրդատվությունը, ժամանակավոր պաշտպանությունը և պետական իրավական օգնությունը,
- հանրային ազդարարման մեխանիզմներ նախատեսված չեն,
- չկա համապատասխան պատասխանատու մարմին, որը պատասխանատու է ազդարարների պաշտպանությունն ապահովելու և ազդարարման նկատմամբ վերահսկողություն ապահովելու, մոնիթորինգի, ազդարարների պաշտպանության վերաբերյալ տվյալների հավաքագրման համար:

Զուգահեռաբար, վերոնշյալի լույսի ներքո իրականացվել է նաև ազդարարման համակարգի օրենսդրության, գործնականում վերջինիս կիրառության և դրանից բխող վիճակագրական տվյալների ուսումնասիրություն՝ օրենսդրական բացերը բացահայտելու նպատակով:
Մասնավորապես, համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի ազդարարման նպատակներն են՝
1) բացահայտել կոռուպցիոն բնույթի դեպքերը, շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումները, հանրային շահերին ուղղված այլ վնասները.
2) նվազեցնել և կանխարգելել կոռուպցիան.
3) նպաստել կոռուպցիայի նկատմամբ հասարակական անհանդուրժողական վերաբերմունքի ձևավորմանը:

Օրենքով նախատեսվում է ներքին և արտաքին ազդարարման հնարավորություն: Ներքին ազդարարումը ազդարարի կողմից իր անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձի կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին հաղորդում ներկայացնելն է: Արտաքին ազդարարումը ազդարարի կողմից իրավասու մարմին հաղորդում ներկայացնելն է:
Օրենքի 8-րդ և 9-րդ հոդվածներով սահմանված է միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով հանցագործությունների մասին հաղորդում տալու հնարավորություն՝ նախատեսելով նաև անանուն հաղորդում տալու հնարավորությունը:
Համաձայն Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունն իր իրավասության շրջանակներում ապահովում է միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված յուրաքանչյուր հաղորդման հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:
Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից և համադրությունից պարզ է դառնում, որ Օրենքով նախատեսված կարգավորումներով, բացառությամբ ներքին ազդարարման դեպքերի, ընթացք են ստանում միայն հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումները: Մինչդեռ, Օրենքի համաձայն ազդարարման նպատակն է նաև նախատեսել շահերի բախման, էթիկայի կանոնների, անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, հայտարարագրման հետ կապված խախտումների վերաբերյալ հաղորդում տալու հնարավորությունը:
Ստացվում է, որ անձը իրավասու մարմնին արտաքին ազդարարման շրջանակներում կարող է ազդարարել նաև վարչական իրավախախտման հատկանիշներ կամ վարույթի հարուցման հիմքեր պարունակող դեպքերի վերաբերյալ: Մինչդեռ, ազդարարման նշված դեպքերի քննության նպատակով իրավասու մարմնի համար ապահովված չէ ստացված հաղորդումներին հասանելիություն:
Բացի այդ, և՛ վերոգրյալ միջազգային պարտավորությունների, և՛ այլ երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազդարարման կարևոր տեսակ է հանդիսանում հանրությանը ազդարարելու մեխանիզմը: Նմանատիպ կարգավորումներ առկա են, օրինակ Սերբիայում[1], Լիտվայում[2], Լատվիայում[3] և այլն:
Սույն երկրներում ազդարարման մյուս տեսակներին զուգահեռ գործում է նաև հանրությանը ազդարարելու մեխանիզմը: Նշվածը իրենից ենթադրում է ազդարարի կողմից հասարակության լայն շրջանակներին բացահայտված խնդրի մասին տեղեկացնելը:
Առկա կարգավորումների պարագայում անհրաժեշտ է հստակեցնել նաև ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմները՝ սահմանելով ազդարարներին տրվող պաշտպանության եղանակների հստակ կառուցակարգեր:
Հարավային Կորեայում ազդարարման ինստիտուտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հանրային շահերի ազդարարների պաշտպանության մասին» ակտով[4]: Ակտի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կան ողջամիտ հիմքեր կասկածելու, որ ազդարարը, նրա ազգականը կամ նրա հետ համատեղ բնակվող անձը վնասվել է կամ առկա է վնասվելու վտանգ կապված ազդարարման հանգամանքի հետ, կիրառելի են «Հատուկ հանցագործություններով տեղեկատվություն տրամադրողների պաշտպանության վերաբերյալ» ակտի 7-րդ, 9-12-րդ հոդվածներով սահմանված կարգավորումները mutatis mutandis: Ընդ որում սույն պաշտպանության մեխանիզմները գործում են և քրեական և ոչ քրեական ազդարարման դեպքերի նկատմամբ:

---

[1]https://www.mpravde.gov.rs/files/ENGLISH%20%20Draft%20Law%20on%20Protection%20of%20Whistleblowers.doc
[2] https://prokuraturos.lt/data/public/uploads/2020/02/1.9-225-praneseju-apsaugos-istatymas-eng.pdf
[3] https://likumi.lv/ta/en/en/id/302465-whistleblowing-law
[4] Տե՛ս https://elaw.klri.re.kr/eng_mobile/viewer.do?hseq=45963&type=sogan&key=42

Ազդարարներին տրվող անձնական պաշտպանության միջոցների վերաբերյալ հարաբերությունները կարգավորվում են 13-րդ հոդվածով: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազդարարի դիմումի հիման վրա իրավասու մարմինը անհրաժեշտության դեպքում դիմում է Ոստիկանության պետին անձնական պաշտպանություն տրամադրելու նպատակով: Ոստիկանության պետը անհապաղ ձեռնարկում է անձնական պաշտպանություն տրամադրելուն ուղղված միջոցներ:

Նշված օրենքով առկա է կարգավորում նաև ուղղված ազդարարին քրեական պատասխանատվությունից ազատելուն կամ պատիժը մեղմացնելուն: Մասնավորապես, Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, եթե ազդարարը հաղորդման հետ կապված հանցավոր արարք է կատարել, վերջինս կարող է ազատվել պատժի կրումից կամ կրել մեղմացված պատիժ: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում են ազդարարին վարչական պատասխանատվությունից ազատելու հիմքերը: Բացի այդ, սույն հոդվածով կարգավորվում են ազդարարի կողմից պատասխանատվության այլ տեսակներից ազատվելու դեպքերը, այդ թվում՝ մասնավոր բնույթի իրավահարաբերությունների շրջանակներում, եթե ազդարարի գործողությունները ինքնին խախտում չեն պարունակում:

Լիտվայում ազդարարման ինստիտուտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ազդարարների պաշտպանության մասին» օրենքով[5]: Օրենքի 8-րդ հոդվածով սահմանվում են ազդարարին պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ դրույթները: Ըստ նշված հոդվածի ազդարարին տրվում են պաշտպանության, խրախուսման և աջակցության տրամադրման հետևյալ հիմնական միջոցները.

(1) խախտումների մասին զեկուցելու անվտանգ ուղիների ապահովում.

(2) անձի գաղտնիության ապահովում.

3) տեղեկատվություն զեկուցած անձի նկատմամբ անբարենպաստ գործողություններ ձեռնարկելու արգելք.

4) արժեքավոր տեղեկատվության համար վարձատրվելու իրավունք.

5) փոխհատուցման իրավունք.

6) անվճար իրավաբանական օգնության ապահովում.

7) պատասխանատվությունից ազատում:

Նույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն վնասակար գործողության ենթարկված անձը կարող է դիմել լիազոր մարմնին, հայտնելով նման գործողությունների և դրա հետևանքների մասին: Լիազոր մարմինը նշվածի հիման վրա դիմում է համապատասխան պետական կառույցին՝ նշելով այն հիմնական երաշխիքները, որոնք ենթակա են ապահովման:

Լատվիայում ազդարարման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Ազդարարման մասին» օրենքով[6]: Օրենքի 10-րդ հոդվածով սահմանվում են ազդարարներին տրվող պաշտպանության միջոցները: Համաձայն նշված հոդվածի ազդարարի կողմից օրենքով սահմանված ընթացակարգերով հաղորդում ներկայացնելուց հետո ազդարարին օրենսդրությամբ սահմանված կարգով տրվում է.

---

[5] Տե՛ս https://prokuraturos.lt/data/public/uploads/2020/02/1.9-225-praneseju-apsaugos-istatymas-eng.pdf
[6] Տե՛ս https://likumi.lv/ta/en/en/id/302465-whistleblowing-law

1) ինքնության պաշտպանություն.

2) պաշտպանություն ազդարարման հետևանքով առաջացած անբարենպաստ ազդեցություններից.

3) պետության կողմից երաշխավորված իրավաբանական օգնություն.

4) քաղաքացիական և վարչական դատավարություններում պետական տուրքի վճարման պարտականությունից ազատում.

5) ժամանակավոր պաշտպանության ապահովում քաղաքացիական և վարչական դատավարություններով դատարաններում քննվող գործերով.

6) իրավական պատասխանատվությունից ազատելը.

7) կորստի կամ անձնական վնասի, ինչպես նաև բարոյական վնասի համար համապատասխան հատուցում.

8) խորհրդակցություններ իր իրավունքների պաշտպանության վերաբերյալ:

Բացի այդ, գործող կարգավորումներով ազդարարների պաշտպանությանը հետևելու, մոնիթորինգի, ազդարարների պաշտպանության վերաբերյալ տվյալների հավաքագրման ոլորտում պատասխանատու մարմին սահմանված չէ:
Հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրաիրավական կարգավիճակը և վերջինիս վերապահված լիազորությունների շրջանակը, և այն, որ ազդարարների պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանության համակարգի տարր է, նպատակահարմար է ազդարարների պաշտպանության իրականացմանը հետևելու լիազորությունը վերապահել Մարդու իրավունքների պաշտպանին, որը որպես անկախության բավարար երաշխիքներ ունեցող մարմին հնարավորինս արդյունավետ կապահովի այս և ազդարարման ոլորտում մյուս լիազորությունների կատարումը:
Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ տարբեր երկրներում առկա են Մարդու իրավունքների պաշտպանին ազդարարման ոլորտում տրված լիազորություններ[7]: Որոշ երկրներ ապահովում են, որ ՄԻՊ-ը պարբերաբար հրապարակի ուղեցույցներ և պարբերական զեկույցներ հանրային ծառայողների կողմից ազդարարման վերաբերյալ: Բացի այդ, օրինակ՝ Նոր Զելանդիայում ՄԻՊ-ը կարող է ստանալ բողոքներ ազդարարներից և նրանց տալ խորհրդատվություն: Նման կառուցակարգեր առկա են նաև Կանադայում: Կանադայում «Հանրային մարմիններում իրավախախտումների բացահայտմանը նպաստող ակտ»-ով խրախուսում է ցանկացած անձի դիմել Քվեբեկի օմբուդսմենին՝ ազդարարման հետ կապված խորհրդատվություն ստանալու նպատակով[8]: Բելգիայում ազդարարման հետ կապված իրավահարաբերություններում ՄԻՊ-ը ևս ունի որոշակի լիազորություններ: Վարչական շրջաններից մեկում ՄԻՊ-ը հանդիսանում է արտաքին ազդարարման պատասխանատու[9]: Հունգարիայում ՄԻՊ-ը հանդիսանում է արտաքին ազդարարման պատասխանատու մարմին և արտաքին ազդարարումների հաշվառումը,

---

[7] Տե՛ս G20 Anti-Corruption Action Plan Protection of Whistleblowers "Study on Whistleblower Protection Frameworks, Compendium of Best Practices and Guiding Principles for Legislation" էջ 23
[8]Տե՛սhttps://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_dialogue/---sector/documents/publication/wcms_718048.pdf, էջ 46
[9] Տե՛ս https://rm.coe.int/the-protection-of-whistleblowers-challenges-and-opportunities-for-loca/16809312bd էջ 12

հաղորդումների ուսումնասիրությունները և ազդարարների պաշտպանության հետ կապված հարաբերությունները համակարգվում է վերջինիս կողմից[10]:

Տեսական աղբյուրներում ազդարարների՝ ՄԻՊ-ին դիմելու պրակտիկան ևս համարվում է ընդունելի[11]:

Վերոգրյալ միջազգային փորձի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ ՄԻՊ-ի կարգավիճակով պայմանավորված մի շարք երկրներում վերջինիս են տրամադրվում ազդարարման համակարգի գործունեության ապահովման մի շարք լիազորություններ: Միջազգային փորձի հաշվառմամբ հարկ է նշել, որ ՀՀ-ում ևս ՄԻՊ-ը ունի անձանց իրավունքների պաշտպանության իրականացմանը հետևելու լայն գործիքակազմ: Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև պետական իշխանության մարմիններում ՄԻՊ-ի ունեցած դերը և նշանակությունը առաջարկվում է դիտարկել ՄԻՊ-ի՝ ազդարարման ոլորտում համապատասխան լիազորություններով օժտելու հնարավորությունը:

4. Առաջարկվող կարգավորման բնույթը

Վերոգրյալի հաշվառմամբ Նախագծերով առաջարկվում է ազդարարման հետ կապված հարաբերությունները տարածել նաև մասնավոր ոլորտի կազմակերպությունների և համայնքային կազմակերպությունների վրա՝ նման կերպ ազդարարման համակարգի կիրառության ոլորտում ներառելով ոչ միայն պետական կազմակերպությունները, այլև համայնքային, ինչպես նաև մասնավոր ոլորտի առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները:

Նախագծերով առաջարկվում է նախատեսել կոռուպցիոն բնույթի՝ հանցագործություն չհանդիսացող իրավիճակների դեպքերում ազդարարում տալու, այդ թվում՝ անանուն ազդարարելու հնարավորությունը՝ միաժամանակ սահմանելով ազդարարման նման դեպքերը քննող իրավասու մարմին:

Նախագծով առաջարկվում է նախատեսել կարգավորում, համաձայն որի Գլխավոր դատախազությունը ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակով ստացված և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորություններին առնչվող դիմումները վերահասցեագրելու է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Միաժամանակ Նախագծով կսահմանվի, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում կապահովի նշված հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

Ազդարարման համակարգին առնչվող մյուս օրենսդրական խնդիրը վերաբերում է ազդարարների համար օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության մեխանիզմներին: Առաջարկվում է հստակեցնել ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմները:

Միաժամանակ ազդարարման համակարգի գործունեության ամբողջական պատկեր ունենալու նպատակով և զուգահեռաբար հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական մարմինների կողմից իրականացվում են ներքին և արտաքին ազդարարման աշխատանքներ և դրանց արդյունքները չեն ամփոփվում, Նախագծերով առաջարկվում է Մարդու իրավունքների պաշտպանի համար սահմանել պարտականություն իր տարեկան հաղորդման շրջանակներում ամփոփել և հրապարակել ազդարարման հետ կապված հաշվետվությունը և վիճակագրությունը:

Նախագծերով առաջարկվում է նախատեսել նոր ազդարարման տեսակ՝ ազդարարում հանրությանը, որի հիմնական նպատակն է ստեղծել գործուն մեխանիզմներ կոռուպցիայի դեմ պայքարի համար՝ ապահովելով հասարակության իրազեկվածության բարձրացումը, հասարակական վերահսկողության

---

[10] Տե՛ս https://www.wolftheiss.com/insights/lessons-learned-practical-experience-from-hungarys-whistleblowing-law/

[11] Տե՛ս Paul Latimer and A. J. Brown, Whistleblower Laws: International Best Practice (November 01, 2008). Monash U. Department of Business Law & Taxation Research Paper No. 1326766, pp. 12.

կառուցակարգերի և պետական կառավարման մարմինների նկատմամբ վստահության ամրապնդումը:
Նախագծերով առաջարկվում է Մարդու իրավունքների պաշտպանին վերապահել ազդարարների պաշտպանության իրականացմանը հետևելու, մոնիթորինգի և ազդարարների պաշտպանության վերաբերյալ տվյալների հավաքագրման լիազորություններ:
Պետք է նաև նկատի ունենալ, որ հաշվի առնելով, որ նախագծով առաջարկվող կարգավորումների արդյունքում ընդլայնվում է ՄԻՊ-ի լիազորությունների շրջանակը, նախագծի ընդունման արդյունքում կարող է ծագել մարդկային լրացուցիչ ռեսուրսներ ներգրավելու անհրաժեշտություն: Որպես կանոն, նման գործառույթների իրականացման համար Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակներում գործում են առանձնացված ստորաբաժանումներ, դիցուք՝ Բելգիայում Օմբուդսմենի ինտիտուտի ներքո գործում է բարեվարքության կետրոն[12], որը ի թիվս այլնի իրականացնում է ազդարարների պաշտպանությունը: Համապատասխան առանձնացված ստորաբաժանում է գործում նաև Հունգարիայում[13]:

5.Նախագծերի ընդունման կապակցությամբ ֆինանսական միջոցների անհրաժեշտության և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում սպասվելիք փոփոխությունների մասին.
Նախագծերի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում ակնկալվում են փոփոխություններ:

6. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք
Նախագծերը մշակվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

7. Ակնկալվող արդյունքը
Նախագծերի ընդունմամբ ակնկալվում է բարելավել ազդարարման գործող համակարգը՝ ներդնելով առավել գործուն և ներառական մեխանիզմներ: Նշվածի արդյունքում ակնկալվում է ապահովել հասարակության կողմից արդեն իսկ գործող ազդարարման համակարգի նախատեսված եղանակներով ներկայացվող հաղորդումների քննության արդյունավետության բարձրացումը, ազդարարներին տրվող պաշտպանության մեխանիզմների կատարելագործումը, կոռուպցիոն և այլ բնույթի իրավախախտումների բացահայտման գործում հասարակության լայն մասնակցայնությունը:

[12] What does the Centre for Integrity? | Federaalombudsman.be
[13] Az OBH szervezeti és működési auditja (ajbh.hu)

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Կ-353-16.08.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազդարարման համակարգի մասին» 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ-97-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում «, պետական հիմնարկների և կազմակերպությունների, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպությունների» բառերը փոխարինել «և կազմակերպությունների» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

6. 1-ին կետում «պետական հիմնարկներում և կազմակերպություններում, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններում» բառերը փոխարինել «ինչպես նաև կազմակերպություններում» բառերով:

7. 2-րդ կետում «պաշտոնատար անձի կամ մարմնի հետ» բառերը փոխարինել «պաշտոնատար անձի, մարմնի, կազմակերպության կամ կազմակերպության աշխատակցի հետ» բառերով, իսկ «վարչաիրավական» բառից հետո լրացնել «կամ այլ» բառերը:

8. 4-րդ կետում «պետական հիմնարկ և կազմակերպություն» բառերը փոխարինել «պետական և համայնքային կազմակերպություն» բառերով:

9. 5-րդ կետից հանել «, որի աշխատողների կամ հաստիքների քանակը գերազանցում է հիսունը» բառերը:

10. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7) **կոռուպցիոն բնույթի դեպքեր**՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 1-ին հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցանքներ.»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում, 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և 13-րդ հոդվածի 1-ին մասում «էթիկայի» բառը փոխարինել «վարքագծի» բառով:

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածում՝

3. 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3. ազդարարում հանրությանը:»:

4. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մաս՝

«4. ~~Հանրությանն ազդարարումը լրատվական գործունեություն իրականացնողի և հասարակական կազմակերպությունների միջոցով հաղորդումը հասարակությանը հայտնի դարձնելն է:»:~~ Հանրությանն ազդարարում են համարվում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումները, որոնք քրեական դատավարության օրենսգրքի և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն համապատասխան վարույթ նախաձեռնելու առիթ կամ հիմք կարող են հանդիսանալ:»:

Հոդված 5. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը «լիազորած անձին» բառերից հետո լրացնել «(բացառությամբ մասնավոր ոլորտի կազմակերպությունների, որոնք չեն դասվում հանրային նշանակության կազմակերպությունների շարքին)» բառերով:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածում

2. 2-րդ մասի 3-րդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Իրավասու մարմնի վերադաս մարմնի բացակայության դեպքում հաղորդումը ներկայացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով կամ համապատասխան մարմնի հանրային ծառայողի էթիկայի հանձնաժողով (առկայության դեպքում):»:

2. լրացնել նոր 8.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ՝

«8.1. Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգային կանոններն ու ժամկետները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ոլորտային օրենսդրությամբ:»:

Հոդված 7. Օրենքի 8-րդ հոդվածում՝

~~1.~~ 1-ին մասում «հանցագործության» բառը փոխարինել «կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման».

~~2. 4-րդ մասում «դատախազությանը» բառից հետո լրացնել «և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին» բառերը:~~

Հոդված 8. Օրենքի 9-րդ հոդվածում

1. լրացնել նոր 1.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը վերահասցեագրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:»:

2. լրացնել նոր 2.1-ին մաս՝ հետևյալ բովանդակությամբ~~2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ~~.

«2.1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ապահովում է իրեն վերահասցեագրված իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:»;~~«2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ապահովում են միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված իրենց իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իրենց իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:»:~~

Հոդված 9. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9.1-ին հոդվածով.

«**Հոդված 9.1. Ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրությունը**

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները վարում են ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրություն՝ իրենց և իրենց ենթակա մարմիններում ստացված հաղորդումների վերաբերյալ, որի վարման կարգը սահմանում է Կառավարությունը:

2. Վիճակագրության մեջ պետք է զետեղված լինեն ազդարարման վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ հետևյալ տողերի՝ ներքին, արտաքին, հանրությանը և միասնական էլեկտրոնային հարթակի միջոցով ներկայացված:»:

Հոդված 10. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4.1-ին գլխով.

«

ԳԼՈՒԽ 4.1

ԱԶԴԱՐԱՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ

Հոդված 9.2. Ազդարարում հանրությանը

1. ~~Ազդարարը կարող է առանց անմիջական ղեկավարին կամ նրա վերադասին կամ նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող այլ անձին կամ իրավասու մարմնի ղեկավարի լիազորած անձին կամ իրավասու մարմնին նախապես ծանուցելու, հաղորդումը (այդ թվում՝ անանուն) հայտնի դարձնել հանրությանը լրատվական գործունեություն իրականացնողների և հասարակական կազմակերպությունների միջոցով, եթե հաղորդումն անհապաղ չներկայացնելը կարող է վնաս պատճառել հանրային շահերին:~~

Եթե ազդարարման մյուս տեսակներով հաղորդումը օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել, ապա ազդարարը կարող է հաղորդումը հայտնի դարձնել հանրությանը զանգվածային լրատվության միջոցներով:

2. Հաղորդում ստացած ~~լրատվական գործունեություն իրականացնողներն ու հասարակական կազմակերպությունները~~զանգվածային լրատվության միջոցները ապահովում են ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ կամ առկա չէ անձի գրավոր համաձայնությունը:

3. ~~Լրատվական գործունեություն իրականացնող անձինք ու հասարակական կազմակերպությունները ստացված հաղորդումը կարող են մուտքագրել միասնական էլեկտրոնային հարթակ:~~

~~4. Ստացված հաղորդումը միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրելու պարագայում ազդարարին~~Ազդարարին տրվող պաշտպանությունը տարածվում է ~~լրատվական գործունեություն իրականացնողի ու հասարակական կազմակերպություններիզանգվածային~~ լրատվության միջոցների վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է նրանց նկատմամբ:

~~5~~4. Իրավասու մարմինն ապահովում է իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:

~~6~~5. Իրավասու մարմինը՝

1) ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը.

2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հարուցում է վարույթ.

3) ապահովում է վարույթի գաղտնիությունը.

4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով.

5) իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունն ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է Հայաստանի Հանրապետության դատախազություն.

6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով.

7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը.

9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ:

~~7~~6. Սույն հոդվածի ~~6~~5-րդ մասով սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

~~8. Եթե հաղորդումը ներկայացվել է ոչ իրավասու մարմին, ապա հաղորդում ստացած մարմինը եռօրյա ժամկետում այն վերահասցեագրում է իրավասու մարմնին՝ ծանուցելով ազդարարին:~~

7~~9~~. Ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է, եթե վերջինիս անձը հայտնի է:

8~~10~~. Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգային կանոններն ու ժամկետները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ոլորտային օրենսդրությամբ:

9~~11~~. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը~~, հաղորդում ստացած լրատվական գործունեություն իրականացնողը կամ հասարակական կազմակերպությունը~~ սույն օրենքով նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն սույն օրենքի 13-րդ հոդվածի իմաստով, ապա իրավասու մարմինը դադարեցնում է պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է համապատասխան անձին:

10~~12~~. Եթե ազդարարի~~, լրատվական գործունեություն իրականացնողի կամ հասարակական կազմակերպության~~ ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության դատախազություն:»:

Հոդված 11. Օրենքի 10-րդ հոդվածում՝

4. լրացնել նոր 2.1.-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. Ազդարարն ունի Մարդու իրավունքների պաշտպանից խորհրդատվական բնույթի գաղտնի խորհրդատվություն և իրավաբանական աջակցություն ստանալու իրավունք:»:

5. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Ազդարարը կարող է հատուկ պաշտպանություն ստանալու համար դիմել իրավասու մարմնին, որը պարտավոր է անհապաղ քննարկել դիմումը և կայացնել համապատասխան որոշում: Նշված որոշումն ուղարկվում է Ոստիկանությանը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանությունն ապահովելու համար:

Ազդարարին հատուկ պաշտպանություն տրամադրելու վերաբերյալ որոշումը ենթակա է կատարման իրավասու պետական մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով սահմանված կարգով, այնքանով, որքանով իր էությամբ (mutatis mutandis) կիրառելի է:»:

6. լրացնել նոր 3.1-ին, 3.2-րդ և 3.3-րդ մասերով հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Ազդարարն իր իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս օգտվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված պաշտպանության միջոցներից:

3.2. Ազդարարին վնասակար գործողություններից կամ դրանց հետևանքներից պաշտպանելու նպատակով համապատասխան մարմինն իր իրավասության շրջանակներում՝

1) ապահովում է տեղեկությունների գաղտնիությունը.

2) ստեղծում է ազդարարի կողմից իր ծառայողական պարտականությունների անարգել իրականացման համար բավարար պայմաններ.

3) ազդարարի գործունեությանն անհարկի և ապօրինի միջամտությունների դեպքում ձեռնարկում է դրանց վերացման ուղղությամբ համապատասխան միջոցներ.

4) իրականացնում է ազդարարի աշխատանքային իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված միջոցներով և կարգով.

5) ձեռնարկում է իրավիճակից բխող՝ ազդարարի պաշտպանությանն ուղղված անհրաժեշտ միջոցներ, այդ թվում՝ ազդարարին տեղափոխում է այլ աշխատասենյակ, ապահովում է ազդարարին արհեստականորեն հանձնարարականներով չծանրաբեռնելը և այլն:

3.3. Ազդարարը չի կարող ենթարկվել որևիցե պատասխանատվության ազդարարման համար, բացառությամբ եթե նրա արարքը պարունակում է հանցակազմ:»:

Հոդված 12. Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Ազդարարի նկատմամբ ձեռնարկված գործողության կամ անգործության իրավաչափությունը ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:»:

Հոդված 13. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին սույն օրենքով վերապահված լիազորությունները ծագում են միասնական էլեկտրոնային հարթակին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հասանելիությունն ապահովելու պահից:~~

2~~3~~. Սույն օրենքից բխող իրավական ակտերը Կառավարությունն ընդունում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

3~~4~~. Սույն օրենքի ~~4-րդ,~~ 9-րդ ~~և 10-րդ հոդվածները~~հոդվածն ուժի մեջ ~~են~~է մտնում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-353-16.08.2022-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-353-16.08.2022-ՊԻ-011/1)					
1.	Կառավարություն	**Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մաս**	Առաջարկվում է **«Ազդարարման համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում** «ազդարարում հանրությանը» հասկացությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Հանրությանն ազդարարում են համարվում կոռուպցիոն բնույթի դեպքի կամ շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտման վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած հրապարակումները, որոնք քրեական դատավարության օրենսգրքի և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի համաձայն համապատասխան վարույթ նախաձեռնելու առիթ կամ հիմք կարող են	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			հանդիսանալ:»: Առաջարկվող փոփոխությունը ուղղված է «ազդարարում հանրությանը» ազդարարման տեսակի հասկացությունը հստակեցնելուն և առավել որոշակի շրջանակ սահմանելուն:		
2.	Կառավարություն	**Օրենքի նախագծի** 7-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասը հանել: Նախագծի շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորություններին առնչվող հաղորդումները Գլխավոր դատախազության կողմից նախատեսվում է վերահասցեագրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, ուստի վերջինիս միասնական էլեկտրոնային հարթակին հասանելիության տարամադրման անհրաժեշտությունը բացակայում է:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	**Օրենքի նախագծի** 8-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածի շրջանակներում խմբագրվող «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 9-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1-ին և 2.1-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «1.1. Շահերի բախման կամ վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ հայտարարագրման հետ կապված խախտումների մասին հաղորդումը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը վերահասցեագրում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:», «2.1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ապահովում է իրեն	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			վերահասցեագրված իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը:»: Միաժամանակ, «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվող փոփոխությունը առաջարկվում է հանել նախագծից: Նախատեսվող կարգավորումների շրջանակներում առաջարկվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորություններին առնչվող հաղորդումները Գլխավոր դատախազության կողմից վերահասցեագրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:		
4.	Կառավարություն	**Օրենքի նախագծի** 10-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 10-րդ հոդվածով «Ազդարարման համակարգի մասին» օրենքում լրացվող 9.2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. « **Հոդված 9.2. Ազդարարում հանրությանը** 1. Եթե ազդարարման մյուս տեսակներով հաղորդումը օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում ընթացք չի ստացել, ապա ազդարարը կարող է հաղորդումը հայտնի դարձնել հանրությանը զանգվածային լրատվության միջոցներով: 2. Հաղորդում ստացած	Ընդունվել է:	Ընդունվել է:

			զանգվածային լրատվության միջոցները ապահովում են ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ կամ առկա չէ անձի գրավոր համաձայնությունը: 3. Ազդարարին տրվող պաշտպանությունը տարածվում է զանգվածային լրատվության միջոցների վրա այնքանով, որքանով այդ պաշտպանությունն իր էությամբ կիրառելի է նրանց նկատմամբ: 4. Իրավասու մարմինն ապահովում է իր իրավասության ոլորտին առնչվող հաղորդումների հաշվառումը, քննարկումը, իր իրավասությունների շրջանակներում միջոցների ձեռնարկումը և անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան ակտի ընդունումը: 5. Իրավասու մարմինը՝ 1) ապահովում է հաղորդման անհապաղ, բայց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում հաշվառումը. 2) իր իրավասության շրջանակներում հիմքերի առկայության դեպքում հաղորդման հաշվառման պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում հարուցում է վարույթ. 3) ապահովում է վարույթի գաղտնիությունը. 4) իր իրավասությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում հաղորդման իսկությունն ստուգելու նպատակով. 5) իր իրավասության շրջանակներում հաղորդման իսկությունն ստուգելիս հանցագործության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ այդ մասին հայտնում է		

			Հայաստանի Հանրապետության դատախազություն. 6) իր իրավասության շրջանակներում միջոցներ է ձեռնարկում ազդարարներին վնասակար գործողություններից պաշտպանելու, ինչպես նաև վնասակար գործողությունների և դրանց հետևանքների վերացման նպատակով. 7) ապահովում է ազդարարի անձնական տվյալների չբացահայտումը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ. 8) ազդարարի պահանջով ապահովում է վարույթի ընթացքի և ձեռնարկված միջոցների մասին տեղեկությունների տրամադրումը. 9) հնարավորություն է տալիս ազդարարին ներկայացնելու պարզաբանումներ, փաստաթղթեր և դիմումներ: 6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված պարտականությունների չկատարումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: 7. Ազդարարման հիման վրա հարուցված վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Հարուցված վարույթի արդյունքում ընդունվում է համապատասխան ակտ, որի մասին ակտի ընդունման պահից եռօրյա ժամկետում ազդարարը ծանուցվում է, եթե վերջինիս անձը հայտնի է: 8. Սույն հոդվածով նախատեսված ընթացակարգային կանոններն ու ժամկետները կիրառվում են, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան ոլորտային օրենսդրությամբ: 9. Եթե վարույթի ընթացքում պարզվում է, որ ազդարարը սույն օրենքով		

			նախատեսված կարգով հաղորդում ներկայացնելիս գործել է անբարեխղճորեն սույն օրենքի 13-րդ հոդվածի իմաստով, ապա իրավասու մարմինը դադարեցնում է պաշտպանության տրամադրումը, որի մասին որոշման կայացման պահից եռօրյա ժամկետում ծանուցում է համապատասխան անձին: 10. Եթե ազդարարի ոչ բարեխիղճ գործողությունը պարունակում է հանցագործության հատկանիշներ, ապա իրավասու մարմինը պարտավոր է անհապաղ այդ մասին հայտնել Հայաստանի Հանրապետության դատախազություն:»: Առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է հստակեցնել «ազդարարում հանրությանը» ազդարարման տեսակի կառուցակարգերը:		
5.	Կառավարություն	**Օրենքի նախագծի** 13-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր	Առաջարկվում է նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ մասը հանել: Ըստ այդմ վերանայել հոդվածի մասերի համարակալումը: Միաժամանակ, առաջարկվում է նույն հոդվածի 4-րդ (վերոնշյալ 2-րդ մասը հանելու պարագայում՝ 3-րդ) մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքի 9-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից: »: Սույն փոփոխությունները ուղղված են Նախագծում իրականացվող հիմնական փոփոխությունների և Նախագծի անցումային դրույթների	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			համապատասխանեցմանը:		
«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-353[1]-16.08.2022-ՊԻ-011/1)					
6.	Կառավարություն	Օրենքի նախագծի վերնագիր	Առաջարկվում է Նախագծում իրականացնել տեխնիկական բնույթի փոփոխություն, մասնավորապես՝ Նախագծի վերնագրից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
7.	Կառավարություն	Օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ	Առաջարկվում է Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 13-րդ կետում «ազդարարման» բառից հետո ավելացնել «դեպքում» բառը, իսկ Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներից հանել համապատասխանաբար «միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված» և «ազդարարման միասնական էլեկտրոնային հարթակ մուտքագրված» բառերը: Նախագծի շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի լիազորություններին առնչվող հաղորդումները Գլխավոր դատախազության կողմից նախատեսվում է վերահասցեագրել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, ուստի վերջինիս միասնական էլեկտրոնային հարթակին հասանելիության տրամադրման անհրաժեշտությունը բացակայում է:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «2. Սույն օրենքով սահմանված վիճակագրության վարման վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում ազդարարման հետ կապված համապատասխան վիճակագրության վարման կարգը սահմանող իրավական	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ակտն ուժի մեջ մտնելու պահից:»: Սույն փոփոխությունները ուղղված են Նախագծում իրականացվող հիմնական փոփոխությունների և Նախագծի անցումային դրույթների համապատասխանեցմանը:		
«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-353[3]-16.08.2022-ՊԻ-011/1)					
9.	Կառավարություն	**Օրենքի նախագծի 1-ին հոդված**	Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 502-րդ հոդվածում լրացվող 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Ազդարարի տվյալի ապօրինի հրապարակումը հաղորդում ստացած զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի կողմից՝ (…)»: Վերոգրյալ փոփոխության շրջանակներում հստակեցվում են ազդարարների տվյալների պաշտպանության համար նախատեսված քրեական պատասխանատվության կառուցակարգերը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ (Կ-353[4]-16.08.2022-ՊԻ-011/1)					
10.	Կառավարություն	Օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս	Առաջարկվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ 1-ին հոդվածի 2-րդ մասը հանել և ըստ այդմ 1-ին հոդվածը խմբագրել: Իրականացվող փոփոխությունը պայմանավորված է «ազդարարում հանրությանը» ազդարարման տեսակի կառուցակարգերի փոփոխությամբ, ինչպես նաև օրենսդրությամբ առկա	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծի վերնագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ	Ընդունվել է:

			տերմինաբանության միասնականության ապահովման անհրաժեշտությամբ (մասնավորապես, առաջարկվում է «էթիկայի» բառը փոխարինել «վարքագծի» բառով): Վերոգրյալ փոփոխության շրջանակներում առաջարկվում է նախագծի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»:		